600.0452.04.12.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 դեկտեմբերի 2019 թվականի №452Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի №3Ա ԵՎ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի №319Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի հունվարի 10-ի №3Ա և օգոստոսի 28-ի №319Ա որոշումներով համաձայնություն է տվել «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 4-րդ էներգաբլոկի հովացման աշտարակի հարակից տարածքը (1,72 հա մակերեսով) և այդ տարածքում գտնվող վարչական շենքի 1-ին ու 2-րդ հարկերը (668-ական քմ մակերեսով) «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելուն,

բ) Ընկերությունը 2019 թվականի հոկտեմբերի 1-ի №151 գրությամբ դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի №974Ա որոշմամբ ճանաչվել է ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ, ինչի ուժով էլ պարտավոր է Ընկերությունից վարձակալած անշարժ գույքը ենթավարձակալությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից այդ ազատ տնտեսական գոտում գործունեություն իրականացնելու համար համապատասխան վկայական ստացած անձանց: Նշվածից ելնելով՝ Ընկերությունը խնդրել է համապատասխան փոփոխություններ կատարել Հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 10-ի №3Ա և օգոստոսի 28-ի №319Ա որոշումներում՝ թույլատրելով «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությանը առանց Հանձնաժողովի և Ընկերության համաձայնության, հիշյալ

որոշումներում նշված անշարժ գույքը ենթավարձակալության իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ազատ տնտեսական գոտում գործունեություն իրականացնելու համար համապատասխան վկայական ստացած անձանց,

գ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2019 թվականի հոկտեմբերի 15-ի №ԳԲ/34.1-Մ2-2/2922-19 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Ընկերության դիմումի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը ստանալու նպատակով,

դ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի նոյեմբերի 18-ի 02/16.12/51344-2019 գրությամբ ներկայացվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի սույն թվականի հոկտեմբերի 28-ի №02/16.12/48431-2019 հանձնարարականով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի ներկայացրած դիրքորոշումները՝ Ընկերության՝ սույն որոշման նախաբանի «բ» կետում նշված դիմումի վերաբերյալ առարկություններ չունենալու վերաբերյալ,

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 30-ի №974Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Գործարանային 1 հասցեում գտնվող տարածքում ստեղծվել է ազատ տնտեսական գոտի (օտարերկրյա ուղղակի ներդրումների, երկրի ներդրումային գրավչության բարձրացման, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքի ստեղծման, նոր աշխատատեղերի ստեղծման և կայուն տնտեսական զարգացումը խթանելու նպատակով), որի կազմակերպիչ է ճանաչվել «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունը,

զ) Հանձնաժողովի կողմից սույն որոշմամբ կատարվող լրացումների արդյունքում չեն խախտվի էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չեն վնասվի ազգային անվտանգությունը և պետական շահերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2019 թվականի հունվարի 10-ի ««Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության գույքի մի մասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին» №3Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետով.

«1.1. Համաձայնություն տալ «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից, որպես ազատ տնտեսական գոտու կազմակերպչի, Ընկերության №1 գույքը դրա շահագործման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում գրանցված (ընտրված) առևտրային կազմակերպություններին և (կամ) հաշվառված անհատ ձեռնարկատերերին ենթավարձակալության իրավունքով տրամադրելուն:»:

2) 2019 թվականի օգոստոսի 28-ի ««Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության գույքի մասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին» №319Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ կետով.

«1.1. Համաձայնություն տալ «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերության կողմից, որպես ազատ տնտեսական գոտու կազմակերպչի, Ընկերության Գույքը, դրա շահագործման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում գրանցված (ընտրված) առևտրային կազմակերպություններին և (կամ) հաշվառված անհատ ձեռնարկատերերին ենթավարձակալության իրավունքով տրամադրելուն:»:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
4 դեկտեմբերի 2019 թ.